ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Հունվարի 23-ին, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի որոշումով, մեծահարգ տիար ՍԱՐԳԻՍ ՏԻԳՐԱՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ նշանակվել է Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ:

Փետրվարի 4-ին, առավոտյան ժամը 12-ին, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նորընտիր նախագահ Սարգիս Տիգրանի Գասպարյանը պաշտոնական այցելություն է տվել Վեհարանում Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Առաջինին:

Հայոց Հայրապետի և հայ եկեղեցու գործերի խորհրդի պարոն նախագահի միջև տեղի է ունեցել սրտագին զրույց՝ ջերմ մթնոլորտում:

Փետրվարի 11-ին, առավոտյան ժամը 12-ին, Հայոց Հայրապետը փոխադարձ այցելություն է տվել Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պարոն Սարգիս Տիգրանի Գասպարյանին, Երևանում, նրա պաշտոնատան մեջ:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էր տ. Հուսիկ եպիսկոպոսը:

Այցելությունն անցել է սիրալիր մթնոլորտում: